ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

.ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
.Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արսեն Պետրոսյանի
Մեծամոր համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի
.Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
.Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
. Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանի
.Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
.Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
.ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Գլխավոր քարտուղար՝ Արամ Հովհաննիսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
.ՀՀ հանրապետական գործադիր մարմինների
տարածքային ծառայությունների ղեկավարներ

.ՀՀ ԱԱԾ արմավիրի մարզային վարչության
պետի պարտականությունների
ժամանակավոր կատարող՝ Ռաֆիկ Բոխյանի
.ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային Կարեն Հակոբյանի
.ՀՀ քաղաքաշինության,տեխնիկական և
հրդեհային անվտանգության տեսչական
մարմնի տարածքային բաժնի պետ՝ Արայիկ Ալեքսանյանի
.Վաղարշապատ ՋՕԸ ի- պետ Բագրատ Հովհաննիսյանի
.ՀՀ Արմավիրի մարզպետարանի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

. Լրատվամիջոցների ներկայայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մարտի 22-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի 2021 թվականի գործունեության հաշվետվության ներկայացում

/Էդվարդ Հովհաննիսյան-

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2021 թվականի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ

/ ՀՀ Արմավիրի մարզպետարանի՝

–Գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյան,

–Ֆինանսական և սոցիալ–տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ–գլխավոր հաշվապահ Արայիկ Հակոբյան,

–Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Գևորգ Գևորգյան/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի ընթացքի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2017–2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող 2021 թվականի տարեկան գործունեության ծրագրի մշտադիտարկման արդյունքների և 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/Լիլիթ Մուշեղյան-

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետարանի Զարգացման ծրագրերի,
զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ/

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5–ի N 14-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը, կապված ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացի հետ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյան/

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում կատարվող աղբահանության աշխատանքների ընթացքի մասին

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Քաղաքաշինության վարչության պետ
Աշոտ Հովհաննիսյան/

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում հանքարդյունահանման առկա իրավիճակը և հիմնախնդիրները

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արթուր Այվազյան/

8. Հայտարարություններ՝

ա/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում վերաբնակեցված արցախցիների կարիքների գնահատման գործընթացի վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետի
խորհրդական Սաթենիկ Թովմասյան/

բ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններ /ՀՈԱԿ/ հանդիսացող բժշկական ամբուլատորիաներում աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առկա հիմնախնդիրների վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետի
խորհրդական Սաթենիկ Թովմասյան/

գ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացի վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ
Սոնյա Բուդաղյան/

դ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների նոր կազմավորվելիք խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերի վերաբերյալ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետի պարտականությունները
ժամանակավոր կատարող
Գայանե Հարությունյան/

ե/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաղորդումներ

/ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արթուր Այվազյան

զ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2022 թվականին իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրի մասին

/ ՀՀ Արմավիրի մարզպետարանի
Տեղական ինքնակառավարման և հանրապետական
գործադիր մարմինների հարցերով վարչության
պետ Գոռ Հովհաննիսյան/

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցներին ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության նորանշանակ պետ Գոռ Հովհաննիսյանին՝ ցանկանալով նրան հաջողություններ հետագա աշխատանքում:

Օրակարգային <<**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022թվականի մարտի 22-ի նիստի օրակարգը հաստատելու մասին**>> առաջին հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022 թվականի մարտի 22-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2022թվականի մարտի 22-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ՝ հարցով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը ներկայացրեց մարզպետի աշխատակազմի 2021 թվականի գործունեության հաշվետվությունը, որն իր մեջ ներառում է ըստ ոլորտների իրականացված աշխատանքները, գրանցված արդյունքները և նախատեսվող ծրագրերը: ՀՀ Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը հիմնականում ներկայացնելով հաշվետվության թիրախային կետերը, ընդգծեց, որ աշխատակազմը 2021 թվականի աշխատանքային գործունեությունը սկսել է մարզի 97 համայնքների և մարզի բնակչության հիմնախնդիրներից բխող սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացմամբ՝ գործողության հիմքում դնելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Անդրադառնալով մարզի տնտեսության ցուցանիշներին՝ Էդվարդ Հովհաննիսյանը նշեց, որ 2020 թվականի ճգնաժամերը՝ կորոնավիրուսային համավարակը, դրա հետևանքով տնտեսական ճգնաժամը՝ և Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմի հետևանքները ծանր հարված են հասցրել տնտեսական աճի տեմպերին: Այդուհանդերձ, 2021 թվականը տնտեսական առումով հուսադրող է եղել:Այսպես, համաձայն Վիճակագրական կոմիտեի հրապարակումների՝ հաշվետու տարում Արմավիրի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերության 4,9%, գյուղատնտեսության՝ 22,6%, շինարարություն՝ 7.4%, մանրածախ առևտուր 4.5%:

Օրակարգային երրորդ հարցի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2021 թվականի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների վերաբերյալ ելույթ ունեցան ՀՀ Արմավիրի մարզպետարանի Գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանը և մարզպետարանի աշխատանքային խմբերի ղեկավարները: Արամ Հովհաննիսյանը նշեց, որ վարչական հսկողությամբ ընդգրկվել են տեղական ինքնակառավարման

մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունը, այդ թվում՝ ավագանու լիազորությունները: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ հսկողության ենթարկված տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը համապատասխանել է օրենսդրության պահանջներին, սակայն քննարկվող բնագավառներում օրենսդրության պահանջների ճշգրիտ կիրառման գործընթացը ոչ միշտ է եղել պահպանված: Արամ հովհաննիսյանը և մարզպետարանի աշխատանքային խմբերի ղեկավարները Արայիկ Հակոբյանը և Գևորգ Գևորգյանը, ովքեր տեղեկացրեցին, որ հսկողությամբ արձանագրված թերություններն ու իրավախախտումները վերացնելու, դրանք հետագայում բացառելու նպատակով համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ աշխատանքային խմբերի կողմից սահմանված կարգով առաջարկություններ են ներկայացվել համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին: Իսկ հսկողություն իրականացված համայնքների մասով կազմված արձանագրությունները, կից նյութերը ներկայացվել են լիազոր մարմին և հրապարկվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի կայքէջում: ՀՀ Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում արձանագրված խախտումներին և բացթողումներին, **ՀՀ Արմավիրի մարզի համայնքերի ղեկավարներին առաջարկեց՝**

Ամենայն պատասխանատվությամբ մոտենալ վերը նշված արձանագրություններում տեղ գտած թերությունների վերացմանը, անհրաժեշտ գործիքակազմ կիրառել հետագայում դրանց կրկնությունը բացառելու և ընթացիկ աշխատանքներն արդյունավետ իրականացնելու ուղղությամբ:

Օրակարգային չորրորդ հարցով ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի ընթացքի, մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող 2021 թվականի տարեկան գործունության ծրագրի մշտադիտարկման արդյունքների և 2022 թվականի տարեկան գործունեության ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը:

Նա մասնավորապես նշեց,որ 2022 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի 7 համայնքներից և ֆերիկ եզդիական չմիավորված համայնքից ստացվել է 80 բնակավայրերին առնչվող 147 սուբվենցիոն հայտ: Մարզպետարանում քննարկման, ծրագրերի համադրման և ոլորտային տեսանկյունից միավորման արդյունքում սահմանված ժամկետում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 46 հայտ և տեխնիկական բնութագիր՝ շուրջ 6 մլրդ 238 մլն դրամ ընդհանուր արժեքով: Լ.Մուշեղյանը միաժամանակ տեղեկացրեց, որ 2021 թվականին ՀՀ Արմավիրի մարզի գործունեության ծրագրի ոլորտների պլանավորված ֆինանսավորուումը կազմել է 78,000,055.4 հազ դրամ,որից 2021 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ փաստացի իրականացվել է 54,223,790.78 հազ.դրամի աշխատանք: 2021թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 2017-2025 թվակնների զարգացման ռազմավարության իրականացման 2021 թվականի գործունեության ծրագրի կատարողականը կազմել է շուրջ 69,5%: Նշվել է նաև ,որ 2022 թվականի համար մարզի գործունեության ծրագրի ոլորտների պլանավորված ֆինանսավորումը կազմել է

38,215,206.4հազ.դրամ,այդ թվում՝ միայն 34,600,356.4 հազ.դրամը պետական բյուջեի միջոցներ: Լ.Մուշեղյանը շնորհանդեսի տեսքով մարզի խորհդի մասնակիցներին ներկայացնելով ողջ գործընթացի մանրամասները համայնքների ղեկավարներին առաջարկեց իրենց համայնքներում կազմակերպել հանրային լսումներ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով օրակարգային հարցին՝ **ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**

Հաշվի առնելով մարզում ներառված բազմաթիվ սուբվենցիոն ծրագրերը՝ հնարավորիս արագ իրականացնել համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի հաստատման գործընթացները և ներկայացնել մարզպետարան դրանց օրենսդրության համապատասխան և սահմանված ժամկետներում լուծում տալու համար:

Օրակարգային հինգերորդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը, կապված ինքնակամ կառույցների հաշվառման գործընթացի հետ, ներկայացրեց մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը: Նա նշեց, որ ինքնակամ շինարարությունը մեծ վնաս է հասցնում մեր պետությանը, այն խանգարում է քաղաքների և գյուղական բնակավայրերի բարեկարգմանը, ճարտարապետական պատշաճ տեսքի պահպանմանը և խանգարում է դրանց նախագծման և կառուցման աշխատանքներին: Ուստի, պետք է վճռական պայքար մղել ինքնակամ շինարարությունների իրականացման դեմ: Ա.Հովհաննիսյանը ներկայացնելով գործընթացի մանրամասները օրենսդրության սահմաններում՝ կարևորեց ՏԻՄ-երի կողմից ազգաբնակչության պատշաճ իրազեկման ապահովումը , քանի որ սահմանված ժամկետներում և կարգով ինքնակամ շինությունների հաշվառումն իրականացնելը բխում է բնակչի շահերից : Նա ընդգծեց, որ 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի հունվարի 6-ը կառուցված ինքնակամ կառույցների դեպքում համապատասխան տեղեկությունները և փաստաթղթերը հաշվառման նպատակով կառավարության որոշմամբ սահմանված կարգով Կադաստրի կոմիտե են ներկայացվում երկամսյա ժամկետում, մինչև 2021 թվականի հունվարի 1-ը քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքների վարչական սահմաններում կառուցված ինքնակամ կառույցների դեպքում՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը, իսկ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքների, վարչական սահմաններում կառուցված ինքնակամ կառույցների դեպքում՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով օրակարգային հարցին, **ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը իրականացնել հետևողական աշխատանքեր ինքնակամ շինությունների հաշվառման գործընթացի ամբողջական և լիարժեք իրականացման համար:

Օրակարգային վեցերորդ հարցով Աշոտ Հովհաննիսյանը ներկայացրեց համայնքներում կատարվող աղբահանության աշխատանքների ընթացքը: Նա ընդգծեց, որ աղբահանությունն ու սանիտարական մաքրումն այն բնագավառներն են, որոնց կարգավորման հիմնական պատասխանատուն տեղական ինքնակառավարման

մարմիններն են և դրանք պատշաճ մակարդակով իրականացնելու, սանիտարահիգենիկ իրավիճակը բարելավելու, աղբահանության վարձավճարների կատարողական ցուցանիշները բարձրացնելու, աղբահանության ծախսերի և եկամուտների հստակ հավաքագրումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խստացնել հսկողությունը ընդհանուր գործընթացի, իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման և աղբավայրերում հակահրդեհային միջոցառումներ պատշաճ իրականացման նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով օրակարգային հարցին, նշեց որ շատ կարևոր է համայնքներում սանիտարական պատշաճ վիճակի ապահովումը, որի համար պետք է սահմանվի շատ բարձր նշաձող;

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը **առաջարկեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝**

Գործուն քայլեր ձեռնարկել համայնքներում աղբահանության լիարժեք գործընթացը հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

Օրակարգային յոթերորդ հարցով ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը, ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզում հանքարդյունահանման առկա իրավիճակը և հիմնախնդիրները: Նա տեղեկացրեց, որ մարզում 218,16 հա հողատարածքի վրա իրականացվում է ընդերքի շահագործում՝ 16 կազմակերպությունների կողմից: Ա.Այվազյանը միաժամանակ ներկայացրեց ընդերքօգտագործման փաստաթղթերի օրինականության ուսումնասիրությամբ պարզված դեպքերն ու առաջարկեց համայնքների ղեկավարներին մեկամսյա ժամկետում իրականացնել հողի նպատակային նշանակության փոփոխություն, իսկ ընդերքի շահագործումն իրականացնել բացառապես լեռնահատկացման ակտով նախատեսված վայրերից՝ սահմանված կոորդինատներին համապատասխան, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում տալ իրավական գնահատական և համագործակցել իրավապահ մարմինների հետ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով օրակարգային հարցին և մարզի համար խիստ կարևոր հիմնախնդիր համարելով հանքարդյունաբերության ոլորտում առկա բացթողումները, **առաջարկեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝**

Հետևողական և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնել խնդրի լուծման ուղղությամբ տարվող աշխատանքները, թույլ չտալով օրենքին հակասող որևէ վարքագիծ, գործադրելով օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցառումները:

Այնուհետև հայտարարությամբ հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի Կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ Սոնյա Բուդաղյանը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող Գայանե Հարությունյանը, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը և Տեղական Ինքնակառավարման և հանրապետական գործադիրի մարմինների հարցերով վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը:

Ս.Թովմասյանն իր հայտարարություններով անդրադարձավ

ա/ ՀՀ Արմավիրի մարզում վերաբնակեցված արցախցիների կարիքների գնահատման գործընթացին՝ նշելով, որ դեռևս 2020թվականի սեպտեմբերի 27-ի Արցախյան 44-օրյա

պատերազմից տուժած և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում վերաբնակեցված բազմաթիվ արցախցի ընտանիքներ կան, ովքեր ունեն բազմաբնույթ չլուծված խնդիրներ: Ուստի կարևորելով խնդիրների լուծման հրատապությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը նախաձեռնել է մարզում բնակվող բոլոր արցախցիների կարիքների խորքային գնահատման գործընթաց,որի արդյունքում համագործակցելով մարզում պետական և ոչ պետական կառույցների հետ, հնարավոր կլինի յուրաքանչյուրին տրամադրել անհատական օգնություն՝ ելնելով իր իսկ կարիքներից:

բ/ՀՀ Արմավիրի մարզի համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների /ՀՈԱԿ/ հանդիսացող բժշկական ամբուլատորիաներում աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առկա հիմնախնդիրներին, նշելով որ մարզի առողջապահական հաստատությունները պետք է կազմակերպեն իրենց աշխատանքն առավել արդյունավետ, ընտանեկան բժիշկները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն համայնքի բնակիչներին, ուղղորդեն նրանց կատարել պրոֆիլակտիկ հետազոտություններ և առողջության պահպանմանն ուղղված միջոցառումներ: Նշված աշխատանքերը ճիշտ կազմակերպելու արդյունքում կթեթևանա նաև հիվանդանոցների և շտապ օգնության ծառայությունների ծանրաբեռնվածությունը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով արված հայտարություններին, **հանձնարարեց՝**

ա/ ՀՀ Արմավիրի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի պարտականությունները կատարող Գ.Հարությունյանին՝պատրաստել համապատասխան գրություն ուղղված Միասնական սոցիալական ծառայությանը՝ ՀՀ Արմավիրի մարզում բնակվող արցախցիների կարիքների հավաքագրման, գնահատման և ամփոփման վերաբերյալ:

բ/ առաջարկեց ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝

լինել առավել հետևողական և ուշադիր համայնքային ենթակայության /ՀՈԱԿ/ հանդիսացող բժշկական ամբուլատորիաների աշխատանքի նկատմամբ, հնարավորինս համալրել երիտասարդ կադրերով և անել առավելագույնը ազգբնակչությանը լիարժեք, բարձր մասնագիտական որակների դրսևորմամբ, կազմակերպվածությամբ ու հոգատար վերաբերմունքով սպասարկում իրականացնելու համար:

Ս.Բուդաղյանը իր հայտարարությամբ անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացին, նշելով որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պարտադիր պահանջ է նախադպրոցական կրթական ծրագրի լիցենզավորումը, սակայն ՀՀ ԿԳՄՍ նախարարություն մուտքագրված հայտերը հիմնականում մերժվում են ուսումնական տարածքների նկատմամբ անհատույց օգտագործման իրավունքի գրանցման վկայականի բացակայության պատճառով: Ուստի անհրաժեշտ է սեղմ ժամկետում իրականացնել օրենսդրությամբ սահմանված գործընթացը:

Գ.Հարությունյանն իր հայտարարությամբ անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում նոր կազմավորվող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կազմերին, նշելով որ ՀՀ Արմավիրի մարզում համայնքների խոշորացման գործընթացով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել

խոշորացված համայնքներում ստեղծել նոր խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ **Ա.Այվազյանը** իր հայտարարությամբ անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզի հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներին, նշելով որ անհրաժեշտ է հետևողական լինել այս գործընթացին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը անդրադառնալով հայտարարությանը, **ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝**
պահպանել իրականացվող աշխատանքների հետ կապված գործընթացի ժամկետները հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիրի մարմինների հարցերով վարչության պետ **Գ.Հովհաննիսյանն** իր հայտարարությամբ անդրադարձավ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում 2022 թվականին իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրին, ըստ որի հսկողություն է իրականացվելու մարզի չորս համայնքներում/Ֆերիկ,Արմավիր, Բաղրամյան, Մեծամոր/: Իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացվելու է մարզպետի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից, որի կազմի և ժամկետների վերաբերյալ համայնքի ղեկավարներին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Օրակարգային հարցերի և հայտարարությունների քննարկման ու ամփոփման ավարտից հետո Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ էդվարդ Հովհաննիսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝ **ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 31.03.2022 16:52:16 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արձ.՝ Մ.Առուշանյան